

# ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ., դրցենք

artashesshahnazaryan.1950@gmail.com

ID 0009-0006-7000-5335

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-46

## ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆԱՏՈՂՄԵՐԻ

### ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(XII Դ. ՎԵՐՁԻՆ ՔԱՌՈՐԴ - XIII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) \*

#### Ամփոփում

XII դ. վերջերին վրաց Բագրատունիների հովանավորությամբ և Զաքարյանների առաջնորդությամբ սելցուկյան տիրապետության դեմ հայ ժողովրդի սկսած շուրջ քառասուն տարվա ընթացք ունեցող ազատագրական պատերազմը դրական արդյունքներ արձանագրեց: Երկրի կենտրոնական, հյուսիսային ու հյուսիսարևելյան գավառների մեծ մասն ազատագրվեց: Իրենց գոյությունը մի կերպ պահպանած իշխանատումները, բարենպաստ պայմանների շնորհիվ, վերելք ապրեցին, իսկ նրանց իշխանությունները հզորացան, ինչում Զաքարյանների դերը մեծ էր:

Դրանցից որոշակի առումով առանձնանում են 1182 թ. Արցախի ամբողջական իշխանության մասնատման արգասիք Հաթերքի կամ Վերին Խաչենի, Ծարի ու Ներքին

\* Ներկայացվել է 21.V.2025 թ., գրախոսվել է 27.V.2025 թ., ընդունվել է դրագրության 20.VI.2025 թ.:

Խաչենի իշխանությունները: Զաքարյանները վերջին երկուահ իշխանատոհմերի հետ հաստատել էին խնամիական կապեր: Սակայն նրանց հետ Զաքարյանների փոխհարաբերությունները նույնական չեն: Եթե Ծարի իշխանատոհմը, Զաքարյանների ստորական լինելու պատճառով, նրանց հետ ուղղահայաց փոխհարաբերություններ ուներ, ապա Ներքին Խաչենի իշխանատոհմը՝ հորիզոնական, քանի որ Զաքարյանները նրան գերակա չեն:

Վերջին իրողությունից բխում է, որ Ներքին Խաչենի իշխանությունը Վրացական թագավորության մաս կազմող և Զաքարյանների գլխավորությամբ ավատատիրական իշխանությունների ցանց հանդիսացող Զաքարյան Հայաստանի մաս չի եղել:

**Բանալի բառեր՝** Արցախ, Զաքարյաններ, Իվանե Ա, Դոփ, Ծար, Հասան-Զալալ, Խորիշահ:

### **Ներածություն**

Զաքարյանների ու Արցախի իշխանատոհմերի փոխհարաբերությունները դիտարկվող ժամանակահատվածի հայոց պատմության ուշագրավ էջերից են: Դրանց վերհանումն օգնում է հնարավորինս ամբողջական ու պատմական իրողություններին համապատասխան պատկերացում կազմելու գարգացած ավատատիրության շրջանի երկրորդ փուլի Հայաստանի այդ նշանավոր հայկական իշխանատոհմերի փոխհարաբերությունների մասին: Քննվող հիմնահարցի մասին ժամանակի հայկական գրչագիր ու վիմագիր և օտար որոշ սկզբնաղբյուրներում պահպանված

տեղեկությունները հարուստ չինելով հանդերձ դա թույլ են տալիս: Նաև նպաստում են պարզելու Զաքարյան Հայաստանի՝ Զաքարյանների գլխավորած ավատատիրական աստիճանակարգում Արցախի իշխանատումների՝ ներկայացվածության և նրանց իշխանությունների՝ Զաքարյան Հայաստանի կազմում ընդգրկվածության հարցերը:

Աղրբեջանի կողմից Արցախի բռնազավթումից ու հայագրկումից հետո աղրբեջանականացվում է ոչ միայն ի բնե հայկական այդ երկրամասը, այլև սեփականացվում է նրա պատմությունը՝ հոչակելով աղվանական=աղրբեջանական: Հետևաբար, Արցախի պատմության ցանկացած դրվագի անաշառ քննությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն: Առավել ևս, որ Աղրբեջանում պետական մակարդակով Արցախի պատմության խորացող նենգափոխումն ունի մեկդարյա պատմության:

Վերոգրյալով պայմանավորված, Արցախի պատմության տարբեր շրջաններ, դրվագներ ու հիմախնդիրներ մշտապես գտնվել են հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում: Դրանցից է նաև սույն հոդվածի քննության առարկան, որին այս կամ այն չափով, հիմնականում թոռուցիկ, անդրադարձել են Հ. Մանանյանը, Լ. Բաբայանը և, հատկապես, Բ. Ովուբաբյանն ու Ա. Հակոբյանը: Սակայն Զաքարյանների և Արցախի իշխանատումների փոխհարաբերությունները հոդվածային հատուկ քննության առարկա չեն դարձել և իրենց ամբողջության մեջ չեն քննվել: Բացի այդ, նշված հեղինակների որոշ դիտարկումները կարոտ են սրբագրման ու լրացման, ինչը

կփորձենք անել:

**Արցախը XII դ. վերջերին և Զաքարյանների ու նրա իշխանատոհմերի փոխհարաբերությունների հաստատումը**

Հայոց Արևելից կողմանքում X դ. ստեղծված հայկական փոքրիկ թագավորություններն անկարող լինելով դիմակայել սելջուկյան գնալով ահագնացող ճնշմանը, մինչև XI դ. վերջին քառորդը հաջորդաբար լքեցին պատմության ասպարեզը: Այդուհանդերձ, «ի տարբերություն օր. Փառիսոսի, Խաչենի (=Արցախի- Ա. Շ.) արքայական տոհմը, ըստ ամենայնի, գոյատևել է թեկուզ բաժանված մանր տիրությունների»<sup>1</sup>:

Արցախի իշխանությունները նախ համառորեն պայքարում էին Գանձակի ամիրության, ապա 1136 թ. նրան փոխարինած և մինչև 1225 թ. գոյություն ունեցած Գանձակի Ելտկուզյան աթաբեկության դեմ: Այդ իրողությանը 1182 թ. Դադիվանքում կանգնեցրած Խաչքարի հակառակ երեսին թողած վիմագրում փաստել է Խաչենի իշխանապետ Հասան Կրոնավորյալը: Նա մասնավորապես նշել է, որ իր ավագության, այսինքն, իշխանապետության 40 տարում՝ 1142 թ. սկսած շատ է պատերազմել և աստծո օգնությամբ հաղթել իր թշնամիներին<sup>2</sup>:

Նույն վիմագրում Հասան Կրոնավորյալը նշել է, որ այդ թվականին իր բերդերն ու գավառները հանձնել է որդինե-

<sup>1</sup> Յակոբեան. 2020, 293:

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության. 1982, 198:

րին և կրոնավորելու նպատակով մտել վանք, այսինքն Դադիվանք ու կանգնեցրել սույն վիմագիր խաչքարը<sup>3</sup>: Նույն վանքում այդ թվականին իր կանգնեցրած խաչքարի վրա թողած արձանագրության մեջ նրան կրկնորդել է կի-նը՝ Մածնաբերդի տեր Կյուրիկի Բ-ի դուստր Մաման (Մամ-քանը)<sup>4</sup>: Ուշագրավ է, որ իր արքայական ծագումը շեշտելը չմոռանալով իրեն թագուհի հորջորջած Մաման չի զլացել շեշտել, որ ամուսնու հետ 30 տարի ավագություն է վարել. «կացար յաւագութեան յամս: Լ:»<sup>5</sup>:

Սակայն ընդամենը հինգ տարի անց՝ 1187-ին, Խոսրով Գանձակեցու վկայաբանության մեջ Մխիթար Գոշի հայտնածից հետևում է, որ Արցախում, ինչպես Հ. Մանանյանն է բնութագրել. «անիշխանություն» էր տիրում<sup>6</sup>: Մխիթար Գոշի համաձայն «ի ժամանակս բռնակալութեան (Ե) ղեմացուց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց իսպառապուռ և անտերունչք շրջէին մնացորդը իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհս վատատե(ա)լը, ոչ հնագանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ... Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ առաջնորդ որ հովուէ»<sup>7</sup>:

Ծատ չանցած Արցախում ևս անիշխանական վիճակը վերացավ: Դրան հատկապես նպաստեցին Գանձակի

<sup>3</sup>Դիվան հայ վիմագրության. 1982, 198:

<sup>4</sup>Դիվան հայ վիմագրության. 1982, 215:

<sup>5</sup>Դիվան հայ վիմագրության. 1982, 215:

<sup>6</sup> **Մանանյան.** 1952, 119:

<sup>7</sup> Խոսրով Գանձակեցու վկայաբանությունը. 1896, 590-591:

Ելտկության աթարեկության դեմ Զաքարյանների գլխավորած հաղթական մարտերի շնորհիվ նրա տիրապետության տակ գտնվող հայկական հողերի (այդ թվում և Արցախում) ազատագրումն ու նրա թուղացումը: Դրա շնորհիվ Արցախի իշխանությունների վերելքի պայմաններ ստեղծվեցին: Արցախի որոշ իշխանատոհմերի հետ Զաքարյանների խնամիական կապերի հաստատումը ևս իր դրական դերը խաղաց:

Դրանում այդ ժամանակ Զաքարյանների տոհմավագ մեծ Սարգսի դերը դժվար է գերագնահատել: Ժամանակի թե՛ հայտնի, և թե՛ նոր բարձրացող իշխանատոհմերի հետ խնամիական կապերի հաստատումը նա իրավացիորեն համարում էր Զաքարյանների դիրքերի ամրապնդմանն ու ազդեցության տարածմանը նպաստող միջոցներից մեկը: Զաքարյանների հետ խնամիանալով նոյնին էին ձգտում նաև Արցախի իշխանատոհմերը:

Մեծ Սարգսին իր հինգ դուստրերից Վանենուն (Նանա) կնության էր տվել Մածնաբերդի տեր Աբաս Կյուրիկյանին: Սակայն նա երկու տարի անց<sup>8</sup> 1176-ին, վախճանվեց<sup>9</sup>: Ինչ վերաբերում է նրա Արցախ հարս գնացած դուստրերին, ապա նրանցից Խորիշակը դարձել էր Ներքին Խաչենի իշխան Վախտանգ Տանգիկի կինը, իսկ Դոփիը՝ Ծարի իշխանատոհմից Հասան Ա Ծարեցու:

Իր կրտսեր եղբայր Վահրամի մահվանից հետո նրա որդիներին խնամակալող մեծ Սարգսիը նրանցից ավա-

<sup>8</sup> Գանձակեցի. 1961, 152:

<sup>9</sup> Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբէլեանի. 1942, 19:

գին՝ Բլուզ Զաքարեին, ամուսնացրել էր Արցախի ոչ անհայտ Դեսոմյան իշխանատոհմին պատկանող Հասանի դուստր Խաթունի հետ:

Այդ մասին տեղեկանում ենք Հաղբատի Խաթունաշեն Սուլր Աստվածածին Եկեղեցու արևելյան պատին Խաթունի թողած 1204-1216 միջակայքով թվագրվող<sup>10</sup> արձանագրությունից: Ըստ դրա, Խաթունն այդ Եկեղեցին կառուցել է ի հիշատակ ամուսնանալիս Արցախից իր հետ ինչ-ինչ պատճառով Եկած Եղբայրների՝ «առ դուն կաթողիկեհս, հուղարկավորված Սենեքերիմի ու Սևադայի<sup>11</sup>»: Թերևս Ենթադրելի է, որ նրանց Բլուզ Զաքարեին ապավինել է դրդել Արցախում անապահով վիճակում գտնվելը:

Կոպիտ հաշվարկներով, այն է՝ Ելնելով Աբաս Կյուրիկյանի հետ Վանենու 1174 թ. ամուսնանալու և մեծ Սարգսի 1187 թ. վախճանվելու մասին<sup>12</sup> առկա հավաստի տվյալներից, նաև Արցախի իշխանատոհմերի հետ Զաքարյանների խնամիական կապերի, այսինքն, փոխհարաբերությունների հաստատումը կարելի է թվագրել 1170-ական թվականներով:

Զաքարյանների հետ սերտ փոխհարաբերություններ էր հաստատել նաև Վասակ իշխանի գլխավորությամբ XIIդ. վերջերին Խաչենից Վայոց Զորում հաստատված Խաղբակյան իշխանատոհմի ավագ ճյուղը: Նրա «կրտսեր տոհմաճյուղը մնացել է Խաչենում և գտնվել Հասան-Զա-

<sup>10</sup> Շահնազարյան. 1990, 68:

<sup>11</sup> Դիվան հայ վիմագրության. 2012, 208:

<sup>12</sup> Դիվան հայ վիմագրության. 2012, 108:

լայսանների քաղաքական ազդեցության ոլորտում»<sup>13</sup>:

### **Զաքարյանների ու Արցախի իշխանատոհմերի փոխ- հարաբերությունները XIII դ. առաջին կեսին**

Մինչև XIII դ. երկրորդ տասնամյակի սկզբներն Արցախի իշխանատոհմերի ու Զաքարյանների փոխհարաբերությունների մասին ինչպես գրչագիր, այնպես էլ վիմագիր սկզբնադրյուրներում տեղեկություններ չեն պահպանվել:

Վախտանգ Տանգիկի ու Խորիշահի պատվերով 1212-1214 թթ. միջակայքում ընդօրինակված Ավետարանի գրիչը հիշատակարանում հայտնել է նրանցից առաջինի՝ Վախտանգի թոռ և Հասանի որդի, իսկ երկրորդի՝ «դուստր մեծ սպարապետին Սարգսի» լինելը<sup>14</sup>: Սակայն Վախտանգ Տանգիկը բավարարվել է լոկ Խորիշահի՝ իր լծակիցը, զուգակիցը լինելը փաստելով<sup>15</sup>, հարկ չհամարելով հայտնել, որ նա մեծ Սարգսի դուստրն է:

Փոխարենը, Խորիշահը Մեծրանից Սուրբ Հակոբա վանքի արևմտյան եկեղեցու 1214 թվակիր արձանագրության մեջ հայտնում է, որ ինքը Խաչենի տեր Վախտանգի կինն է, մեծ Սարգսի դուստրը և Զաքարեի ու Իվանեի քոյրը<sup>16</sup>: Ընդ որում, Խորիշահը որոշներից երկուայն կոչել էր իր եղբայրների անուններով<sup>17</sup>, ինչն ամուսնու առարկությա-

---

<sup>13</sup>Սարգարյան. 2023, 234:

<sup>14</sup>Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 94:

<sup>15</sup>Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 94:

<sup>16</sup>Դիվան հայ վիմագրության. 1982, 12:

<sup>17</sup>Դիվան հայ վիմագրության. 1982, 40:

նը չէր հանդիպել:

Վախտանգ Տանգիկը 1214-ին վախճանվեց և Նեղքին Խաչենի իշխան դարձավ նրա ավագ որդին՝ պապի անունը կրող Հասան-Զալալը: Վախտանգ Տանգիկի մահվան մասին հայտնած Վարդան Վարդապետը, փաստելով նրա մեծ Սարգսի փեսան լինելը, սիսալմամբ նշել է, որ նա թողել է «երկու տղայս, զՀասան, որ և ի գգուանաց Զալալոյա, և Զաքարէ» որ և Նասրադօլա»<sup>18</sup>: Ապա հավելել է. «զորս խնամարկէր հանէ մարբն իրեանց Խորիշահիւ»<sup>19</sup>: Վարդան Վարդապետի այս վկայության հիմամբ Հ. Օրբելին նկատել է, որ Վախտանգի մահից հետո «Իվանեն իր քոյր Խորիշահի հետ դաստիարակում էր և նրա որդիներ Զաքարեին ու Հասանին»<sup>20</sup>:

Անդրադառնալով Հ. Օրբելու այս դիտարկմանը, Բ. Ուլուբարյանը գտել է, որ պատմիչի խոսքերն այդպես չպետք է հասկանալ, պատճառաբանելով, որ «նախ «խնամարկել» նշանակում է ոչ թե «դաստիարակել», այլ հոգալ, իսկ տվյալ դեպքում՝ հովանի լինել»<sup>21</sup>: Ապա համոզմունք է հայտնել, որ Վարդան Վարդապետի այս «տեղեկությունն այնքան էլ վստահելի չէ» թեկուզ այն պատճառով, որ նա Վախտանգի որդիներից հիշատակում է միայն երկուսին<sup>22</sup>:

Որ պատմիչը Վախտանգի չորս որդիների թիվը ճիշտ

<sup>18</sup>Հաւաքումն պատմութեան. 1862, 140:

<sup>19</sup>Հաւաքումն պատմութեան. 1862, 140:

<sup>20</sup>Օրծելու. 1963, 149.

<sup>21</sup>Ուլուբարյան. 1975, 173:

<sup>22</sup>Ուլուբարյան. 1975, 173:

չի ներկայացրել, անվիճելի է: Սակայն նա «խնամարկել» բառը, որ նշանակում է «խնամ ածել կամ տանել, ունել, խնամել»<sup>23</sup>, հենց այդ և ոչ թե «դաստիարակել» իմաստով է օգտագործել, ինչպես ներկայացրել է Հ. Օրբելին: Ուստի, Վախտանգ Տանգիկի ու Խորիշահի որդիների թվի հարցում Վարդան վարդապետի վրիպումը նրա ամբողջ վկայությունը կասկածի տակ լինելու հիմք չպետք է դառնա: Ի դեպ, Հ. Օրբելին քիչ անց հվանե Ա-ին Հասան – Զալալի ոչ թե դաստիարակ, այլ խնամակալ է համարել»<sup>24</sup>:

Քեռու կողմից խնամակալվելով հանդեճ, Արցախի իր ժամանակի ամենահզոր ու նշանավոր իշխան և ժամանակակիցների կողմից արքա, թագավոր հոչակված Հասան – Զալալը, ի տարբերություն իր մորաքույր Դոփի ժառանգների, փաստորեն խուսափել է Զաքարյանների հետ մայրական գծով իր ազգակցությունը շեշտելուց: Եվ դա այն դեպքում, երբ անգամ ան-Նասիվին Հասան Զալալի հետ կապված 1227 թ. իրադարձություններին անդրադառնալիս նրա անձը կարևորելու միտումով շեշտել է, որ նա հվանե ալՔուրզիի, այսինքն, հվանե Ա Զաքարյանի քրոջ որդին է<sup>25</sup>:

Թե որն էր Զաքարյանների հետ իր ազգակցական կապը Հասան-Զալալի՝ փաստորեն լրության մատնելու պատճառը, դժվար է ասել: Այդ հանգամանքը թերևս կարելի է բացատրել հետևյալով. Վարդան վարդապետի վկայությամբ, 1214թ. «զՀաքերք յիվանե տուին տիարք նորա, զի

<sup>23</sup>Նոր բառագիրք Հայկագեան լեզուի. 1979, 950:

<sup>24</sup>Օրծելի. 1963, 150.

<sup>25</sup> Ին - Նասիվ. 1973, 211.

մեռավ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարածամ»<sup>26</sup>: Դժվար չէ կոսիել, որ սա կատարվել է ոչ առանց իվանե Ա-ի ճնշման, քանզի դրա շնորհիվ նա «ընդհուպ մոտեցավ իր քեռորդիների... Դոփյանների ու Ներքին Խաչենի իշխան Հասան-Զալալի կալվածքների սահմաններին»<sup>27</sup>:

Իվանե Ա-ն Հաթերքի կամ Վերին Խաչենի Վախտանգ իշխանի տիրույթներն իր իշխանությանը կցելու փոխարեն հանձնեց Դոփի սերունդ Դոփյաններին, դրանք միացնելով նրանց Ծարի իշխանությանը: Եվ դա այն դեպքում, երբ Հաթերքի իշխանությունը սահմանակից էր Ծարի ու Ներքին Խաչենի իշխանություններին և թվում է, թե արդարացի կլիներ նրա տարածքը վերջիններիս միջև բաժանել: Առավել ևս, որ ինչպես ստորև կտեսնենք, Հասան-Զալալը հավակնություններ ուներ Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխանությունում գտնվող Չարաբերդի (Ջրաբերդ), Կարկառի ու Ականայի նկատմամբ<sup>28</sup>:

Բ. Ովուբաբյանի կարծիքով, Իվանե Ա-ն հովանավորում ու ամեն տեսակ օժանդակում էր Դոփին և «Ծարա իշխանության համար ստեղծում... մի տեսակ արտոնյալ վիճակ Արևելյան Հայաստանի մանր իշխանությունների շարքում»<sup>29</sup>: Սակայն արդեն տեսանք, որ նա աջակցում էր նաև այրիացած Խորիշահին, խնամակալելով նրա որբացած

<sup>26</sup>Հայաքոն պատմութեան. 1862, 140:

<sup>27</sup>Հայոց պատմություն. 2014, 227-228:

<sup>28</sup>Կիրակոս Գանձակեցի. 1961, 359:

<sup>29</sup>Ովուբաբյան. 1975, 152:

որդիներին: Հետևաբար, Հաթերքի իշխանությունը միայն Դոփյաններին հաճնելը պայմանավորված էր այլ հանգամանքով: Բանն այն է, որ Վերջիններս իվանե Ա-ի ստորականներն էին, իսկ Հասան-Զալալը՝ ոչ: Հետևաբար, Դոփյանների հետ իվանե Ա-ի փոխհարաբերությունները կրում էին ուղղահայաց, իսկ Հասան-Զալալի հետ՝ հորիզոնական բնույթ: Վերոգրյալով պայմանավորված, Հասան-Զալալը՝ Զաքարյանների հետ իր մայրական կողմով ազգակցական կապը սուսկ եղակի բացառությամբ<sup>30</sup> թեթևակի շեշտելը պատահական չէր:

Հասան – Զալալի՝ Զաքարյանների ստորական չլինելու իրողությունից հետևում է, որ Ներքին Խաչենի իշխանությունը Վրացական թագավորության մաս կազմող և Զաքարյանների գլխավորությամբ ավատատիրական իշխանությունների ցանց հանդիսացող Զաքարյան Հայաստանի մաս չէր կազմում: Հետևաբար, նա ի տարրերություն Դոփյանների, Զաքարյան Հայաստանի՝ Զաքարյանների գլխավորած ավատատիրական սանդուղքում տեղ չէր զբաղեցնում:

Հասան-Զալալն այդուհանդեմ գնահատելի սերտ ազգօգուտ գործնական կապեր ուներ Զաքարյանների Վահրամյան տոհմաճյուղը գլխավորող իրենից հզոր իշխան և մայրական կողմով արցախյան արմատներ ունեցող Վահրամ Գագեցու հետ: Նա Վրացական թագավորության մսախութ-ովուցեսն էր՝ Բլուզ Զաքարեի որդին: Այդ կա-

---

<sup>30</sup>Դիվան հայ վիմագրության. 1982, 38:

պերի վկայությունն է այն, որ Վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» մեծարժեք, բայց, ցավոք, դեռ անտիպ երկը հեղինակվել է Հասան-Զալալի ու Վահրամ Գագեցու համատեղ խնդրանքով: Դա է փաստում այդ երկի մի հատվածի խորագիրը. «Խնդիրք Վահրամա իշխանի և Զալալա Հայշենո գավառի և պատասխանի Վանական վարդապետի»<sup>31</sup>:

Հասան-Զալալն Ականային, Զարաբերդին ու Կարկառին տիրացավ հավանաբար 1251 թ.<sup>32</sup> Ուկե հորդայի խան Բաթուի որդի Սարթախի օգնությամբ: Վերջինս իր մոտ գնացած և օգնության խնդրանքով դիմած Հասան-Զալալին ընդառաջելով «տարեալ առ հայրն իւր, մեծապատիւ արար և ետ ի նա զիայրենիս իւր զԶարբերդ և զԱկանա և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»<sup>33</sup>: Իրականում, մասնավորապես Զարաբերդը սելջուկներից նախքան 1211 թ. ազատագրել և ոչ թե Հասան-Զալալից «հանեալ էին» Զաքարյանները<sup>34</sup>: Քանի որ Սյունիքի ու Գեղարքունիքի ուղղությամբ ազատամարտերը գլխավորում էր Իվանե Ա-ն, անկասկած հենց նա է Զարաբերդն առել սելջուկներից<sup>35</sup>: Գեղարդում թողած 1219 թվակիր մի արձանագրության մեջ էլ Իվանե Ա-ն հայտնում է, որ գրավել է նաև Ականան<sup>36</sup>: Որ Կարկառը ևս նա է

<sup>31</sup>Մատենադարան, ձեռ. № 2189, թիվ 211<sup>ա</sup>:

<sup>32</sup>Գանձակեցի. 1961, 359:

<sup>33</sup>Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 392:

<sup>34</sup>Հմմտ. Ուլուբարյան. 1975, 190:

<sup>35</sup>Հովսեփյան. 1969, 299:

գրավել, կասկածից վեր է: Այսպիսով, նա էր Զարաբերդը, Ականան ու Կարկառը գրավել և հանձնել Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխան Վախտանգին:

Բաթու խանին Հասան-Զալալի այցելությունը Հ. Մանանդյանը համարել է «հավանական մի նշան, որ մոնղոլների օրոք Ներքին Խաչենը եղել է անկախ իշխանություն և չի գտնվել Զաքարյանների, այսինքն, Վրաստանի գերիշխանության տակ»<sup>36</sup>: Լ. Բաբայանն էլ, վկայակոչելով Գանձասարի վանքում Հասան – Զալալի թողած 1240 թվակիր արձանագրության<sup>37</sup> սխալներով հրատարակված տեքստը, կարծիք է հայտնել, որ նա այդ ժամանակ «Ներքին Խաչենը հանել էր Վրաստանի ու Զաքարյանների գերիշխանությունից»<sup>38</sup>:

Բ. Ովորաբյանն իր հերթին այդ արձանագրության նույն հրատարակությունն օգտագործելով հանդերձ եկել է ընդունելի եզրակացության, ըստ որի «40-ականներին (1240 – ականներին – Ա. Շ.) ևս Հասան – Զալալի տիրույթը չէր մտնում Ավագյան (Ավագ Զաքարյանի- Ա. Շ.) թումանի մեջ, այլ ինքնուրույն ռազմավարչական միավոր էր՝ միայն հարկատու մոնղոլներին»<sup>39</sup>: Հետագայում՝ 1256 թ., Հասան- Զալալը Սարթակի օգնությամբ հասավ նրան, որ մոնղոլական մեծ խան Մանգուն (1251-1256) «ետ նմա գիր իշխանութեան իւրոյ տիրել սեփականաբար և ոչ երկնչել

<sup>36</sup>Մանանդյան. 1952, 221:

<sup>37</sup>Դիվան հայ վիմագրության. 2012, 38:

<sup>38</sup>Բաբայան. 1964, 262:

<sup>39</sup>Ովորաբյան. 1975, 192:

յումմեք»<sup>40</sup>: Այսպիսով, XII դ. Վերջերից մինչև XIII դ. կեսերը Ներքին Խաչենի՝ հետագայում Հասան- Զալալյան անվամբ հայտնի դարձած իշխանատոհմը Զաքարյանների հետ ուներ հորիզոնական կապեր և նրանց ստորական չէր:

Հասան Ա Ծարեցու հետ ամուսնացած Զաքարյան իշխանադրատր Դոփն ամուսնու մահվանից հետո աչքի ընկավ Ծարի ու Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխանությունում արտակարգ ազդեցությամբ և արդյունաշատ գործունեությամբ, որի շնորհիվ Ծարի իշխանատոհմը հետագայում կոչվեց նրա անունով: Ժամանակին Կարապետ Եպիսկոպոսը<sup>41</sup>ն նրա հետ համերաշխված Հ. Մանանդյանը<sup>42</sup> Ենթադրել են, որ Դոփը Գեղարքունիքի մեծ մասը որպես օժիտ է ստացել: Սակայն, ինչպես նկատել է Բ. Ովոլֆարյանը, իվանե Ա-ը Գեղարքունիքն այդ ժամանակ դեռ չէր ազատագրել<sup>43</sup>: Նա այն ազատագրեց հետագայում մինչև 1211 թ. և նվիրեց քրոջը: Դա Բ. Ովոլֆարյանն անհիմն համարում է Գեղարքունիքի նկատմամբ ծարեցիների՝ իբրև տիրույթի և ժառանգական իրավունքի միայն վերահաստատում<sup>44</sup>:

Զաքարյանների ու Ծարի իշխանատոհմի ազգակցական կապը նաև Դոփի հեղինակությամբ ու ազդեցությամբ

<sup>40</sup>Գանձակեցի. 1961, 373:

<sup>41</sup>Կարապետ. 1914, 155-156:

<sup>42</sup>Մանանդյան. 1952, 156

<sup>43</sup>Ովոլֆարյան. 1975, 162

<sup>44</sup>Ովոլֆարյան. 1975, 162:

պայմանավորված՝ մնում էին սերտ: Դրա վկայությունն են ինչպես նրա, այնպես էլ իր երկու որդիների կողմից այդ կապի պարբերաբար հիշատակումները: Անխաթար էին նաև երկու տոհմերի գերակա-ստորակայական հարաբերությունները: Դրանք չխախտվեցին նաև մոնղոլական տիրապետության հաստատումով:

Ասվածի հավաստումն են հոր մահվանից հետո Ծարի ու Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխանության գլուխ անցած Գրիգոր իշխանի՝ Խադարա վանքին 1244 թ. նվիրած Ավետարանի հիշատակարանում իր իսկ թողած վկայությունները: Բանն այն է, որ նա իր հեծելազորով մի քանի հայ իշխանների, մասնավորապես Ավագ Զաքարյանի, Վահրամ Գագեցու և Հասան – Ջալալի հետ 1242-1243 թթ. մասնակցել է Իկոնիայի սովորականության դեմ մոնղոլների երկու արշավանքներին և հիշատակարանում պատմում է այդ մասին, լրացնելով Կիրակոս Գանձակեցուն<sup>45</sup>: Նա նախ ներկայանում է իբրև «Գրիգոր, որդի Հասանայ Դոփին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց Զաքարիայի և Իվանեի»<sup>46</sup>: Ապա հայտնում է, որ երկրորդ արշավանքի ժամանակ Կեսարիայում «առեալ զԱւետատարանս պարոնն իմ Ավագն (Ավագ Զաքարյանը- Ա. Շ.) եւ ետ ինձ, եւ իմ խնտալից եղեալ... բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս»<sup>47</sup>: Ընդունելով հանդերձ, որ Գրիգորը ենթակա էր

<sup>45</sup>Գանձակեցի. 1961, 280:

<sup>46</sup>Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 228:

<sup>47</sup>Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 228:

իր քեռորդի Ավագին<sup>48</sup>, Բ. Ովուբաբյանը չգիտես ինչու հավանական է համարել, որ «այս արշավանքի ընթացքում Գրիգորը գտնվել է Հասան - Զալալի հրամանի ներքո»<sup>49</sup>, ինչն իրականությանը չի համապատասխանում:

Գրիգորի եղբայր Հովհաննեսը եղել է հոգևորական: Հաղբատի վանքի սուրբ Գրիգոր մատուցում թողած մի արձանագրության մեջ նա հայտնում է Զաքարե Բ և Իվանե Ա Զաքարյանների հետ իր ազգակցական կապի մասին, հավելելով, որ «հրամանաւ սոցա կոչեցա(j) յեպիսկոպոսութիւն սուրբ աթոռայս Հաղբատա(j)»<sup>50</sup>: Հովհաննեսը հուղարկավորվել է Զաքարյանների հոգածությունը վայելող Հաղբատի վանքի գավթում՝ մոր կողքին: Ընդ որում, նրանց տապանաքարերի վրա արձանագրված է Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի՝ համապատասխանաբար քեռորդի և քոյր լինելը<sup>51</sup>:

Զաքարյանների և Ծարի հետագայում Դոփյան անվանումը ստացած իշխանատոհմի փոխհարաբերությունների մասին աղբյուրներում առկա տեղեկությունները վերոշարադրյալով սահմանափակվում են: Ինչ վերաբերում է արցախյան ծագում ոնեցող Խաղբակյանների հետ Զաքարյանների փոխհարաբերություններին, ապա Գ. Հովսեփյանի վերը վկայակոչված կոթողային աշխատությունում դրանք մանրագնին ու շահեկան քննության են արժանա-

<sup>48</sup> Ովուբաբյան. 1975, 190:

<sup>49</sup> Ովուբաբյան. 1975, 232:

<sup>50</sup> Ղաֆարյան. 1963, 180:

<sup>51</sup> Դիվան հայ վիմագրության. 2012, 172:

ցել: Հետևաբար, դրանց ամսագրային հոդվածի սահման-ներում անդրադառնալու հարկը չկա:

## Եզրակացություններ

Զաքարյանների և Արցախի իշխանատոհմերի փոխ-հարաբերությունները սկիզբ են առել մոտավորապես 1170-ական թվականներին՝ խնամիական կապերի հաստատու-մով: Դրանց միջոցով մեծ Սարգիս Զաքարյանն ուզում էր ամրապնդել իր նոր բարձրացող տոհմի դիրքերն ու ազդե-ցությունը: Զաքարյանների հետ խնամիանալով իրենց դիր-քերի ամրապնդմանն ու, ինչու չէ, հզորացման էին ձգտում նաև նրանց հետ խնամիացող Ներքին Խաչենի ու Շարի իշխանատոհմերը:

Զաքարյանները սերտ հարաբերություններ հաստա-տեցին Շարի իշխանատոհմի հետ, որը դարձավ նրանց նաև ստորական: Ինչ վերաբերում է Ներքին Խաչենի հե-տագայում Հասան-Զալայյան կոչված իշխանատոհմին, ապա այն Զաքարյանների ստորական չդարձավ և նրանց հետ պահպանում էր ոչ թե ուղղահայաց, ինպես Շարի իշ-խանատոհմի դեպքում էր, այլ՝ հորիզոնական կապեր: Դրա հետևանքով Ներին Խաչենի իշխանությունը, ի տար-բերություն Շարի ու Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխա-նության, չմտավ Վրացական թագավորության մաս կազ-մող Զաքարյան Հայաստանի մեջ:

## Գրականություն/References/Литература

1. **Բաբայան Լ.** 1964, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIVդարերում, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 608 էջ:  
**Babayan L.** 1964, The Social-economic and Political History of Armenia in XIII-XIV centuries, Yerevan, State Publishing House of Armenia, 608 p.
2. Դիվան հայ վիմագրության 1982, պրակ V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 347 էջ:  
Divan of Armenian Lithograph 1982, vol. V, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 347 p.
3. Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբելեանի 1942, Երևան, Մատենադարան, 46 էջ:  
Chronicles by Stepanos Orbelyan 1942, Yerevan, Matenadaran, p. 46.
4. Խոսրով Գանձակեցու վկայաբանությունը 1896, «Արարատ», էջ 590-591:  
Martyrology by Khosrov Gandzaketsi 1896, "Ararat", pp. 590-591.
5. **Կարապետ Եպիսկոպոս** 1864, Դոփյանը և Մելիք-Շահնազարյանը, նյութեր հայ մելիքության մասին, մաս Բ, Էջմիածին, Էլեկտրաշարժ տպարան Մայր Աթոռի, 234 էջ:  
**Bishop Karapet** 1864, Dopyan and Melik-Shahnazaryan, Materials on Armenian Melikutyun, part B, Etchmiadzin, electric printing, Mother See of Holy Etchmiadzin, 234 p.

6. **Կիրակոս Գանձակեցի** 1961, Պատմություն հայոց, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 426 էջ:  
**Kirakos Gandzketsi.** 1961, History of Armenians, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 426 p.
7. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:  
 Colophons of Armenian Manuscripts, XIII century 1984, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 987 p.
8. Հայոց պատմություն 2014, հ. II, գիրք Երկրորդ, Երևան, «Զանգակ» հրատ., 798 էջ:  
 Armenian History 2014, vol. II, book 2, Yerevan, Zangak Publishing House, 798 p.
9. Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ 1862, ի Վենետիկ, Սուրբ Ղազար, 184 էջ:  
 The Collection of History Illustrated by Vardan Vardapet 1862, Venice, St. Lazarus, 184 p.
10. **Հովսեփյան Գ.** 1969, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ, Անթիլիաս, 523 էջ:  
**Hovsepyan G.** 1969, The Khaghbakians or Proshians in Armenian History, Antiliias, 523 p.
11. **Մանանդյան Հ.** 1952, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 455 էջ:  
**Manandyan H.** 1952, Examinational History of Armenia, vol. III, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 455 p.
12. Մատենադարան ձեռ. № 9188, թ. 211<sup>ա</sup>:  
 Matenadaran, manuscript № 9188, paper 211<sup>a</sup>.

13. **Մարգարյան Հ.** 2023, Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից - ԺԳ դարի առաջին կեսին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 279 էջ: **Margaryan H.** 2023, Notable Princely Dynasties of Armenia in the first half of XII-XIII centuries, Yerevan NAS Publishing House of RA, 279 p.
14. **Յակոբեան Ա.** 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում և Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար (պատմադրյուրագիտական քննություն), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 439 էջ: **Yakobean A.** 2020, Royal and Princely Dynasties in Aghuanq and Eastern Armenia from antic times till XIII century (historical source studies), Yerevan, NAS Publishing House of RA, 439 p.
15. Նոր բառգիրք հայկագեան լեզուի 1979, հատոր առաջին, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 1140 էջ: New word book of Haykazyan language 1979, vol. I, Yerevan, Publishing House of Yerevan State University, 1140 p.
16. **Շահնազարյան Ա.** 1990, Վահրամյանների իշխանությունը, Երևան, «Հայաստան», 215 էջ: **Shahnazaryan A.** 1990, Princely Dynasty of the Vahramyans, Yerevan, Armenia Publishing House, 215 p.
17. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Սեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց 1910, Էլեկտրաշարժ տպարան օրիորդ Ն. Աղանեանցի, 618 էջ:

- The History of Sis state by Stepanos Orbelyan and archbishop of Syunik 1910, electric printing of Ms. N. Aghayants, 618 p.
18. **Ուլուբայյան Բ.** 1975, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 454 էջ:  
**Ulubabyan B.** 1975, The Princely Dynasty of Khachen in X-XVI centuries, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 454 p.
  19. **Ան-Նասիվի** 1973, Шихаб ад-Дин мухаммед ан-Насиви, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, издательство "Элм", 453 с.  
**An-Nasivi** 1973, Shihab ad-Din Muhammad an-Nasivi, The Life of Sultan Jalal ad-Din Mankburny, Baku, Elm Publishing House, 453 p.
  20. **Օրբելի Ի.** 1963, Избранные труды, насан - Джалал, князь Хаченский», Ереван, изд. АН АРМ. ССР, 683 с.  
**Orbeli I.** 1963, Selected Works, Hasan Jalal, Prince of Khachen, Yerevan, Publishing House of Soviet Armenia, 683 p.

**Арташес И. Шахназарян, Институт истории НАН РА, к.и.н., доцент, Взаимоотношения Закарянов с княжескими родами Арцаха (последняя четверть XII в. – первая половина XIII в.)**

### Резюме

Освободительная война армянского народа против сельджукского владычества, начавшаяся в конце XII в. под эгидой грузинских Багратидов и под руководством Закарянов, длилась около сорока лет и привела к положительным результатам. Были освобождены большинство центральных, северных и северо-

восточных гаваров страны. Княжеские роды, сумевшие сохранить свое существование, усилились благодаря благоприятным условиям, при этом Закаряны сыграли в этом ключевую роль.

Среди них в определенной степени выделяются арцахские княжества: Верхний Хачен (или Атерк), Цар и Нижний Хачен. Закаряны установили родственные связи с княжескими родами двух последних. Однако характер этих отношений был различным: если княжеский род Цара находился в вассальной зависимости от Закарянов, то род Нижнего Хачена сохранял равноправные отношения, поскольку Закаряны не являлись их сюзеренами.

Этот факт свидетельствует о том, что до установления монгольского владычества княжество Нижнего Хачена не входило в состав Закарянской Армении, представлявшей собой сеть феодальных княжеств под управлением Закарянов и находившейся в составе Грузинского царства.

**Ключевые слова:** Арцах, Закаряны, Иване I, Доп, Цар, Гасан-Джалал, Хоришах.

**Artashes I. Shahnazaryan, Institute of History of the NAS RA,  
Ph.D in History, Associate professor, The Relationship Between the  
Zakaryans and the Princely Dynasties of Artsakh (Last Quarter of  
the XII Century - First Half of the XIII Century)**

## Summary

At the end of the XII century, the Armenian people's liberation war against Seljuk rule – which lasted for about forty years and was led by the Zakaryans under the auspices by the Georgian Bagratunis – achieved positive results. Most of the central, northern, and northeastern provinces of the country were liberated. The ruling dynasties that had managed to preserve their existence under foreign domination rose in power due to favorable conditions, and their principalities became powerful – a process

in which the Zakaryans played a crucial role.

Among them, the principalities of Upper Khachen (or Haterk), Tsar and Lower Khachen are of particular significance. The Zakaryans had established marital ties with the ruling dynasties of the latter two. However, the Zakaryans' relationships with them were not identical. While the ruling family of Tsar maintained a vassal relationship with the Zakaryans, the ruling family of Nerkin Khachen maintained equal relations, as the Zakaryans were not their suzerains.

This fact indicates that, prior to the establishment of Mongol rule, the principality of Nerkin Khachen was not part of Zakaryan Armenia. Rather, it belonged to the Georgian Kingdom and existed alongside a network of feudal principalities under Zakaryan leadership.

**Key words:** Artsakh, Zakaryans, Ivan I, Dop, Tsar, Hasan-Jalal, Khorishah.